


Վրիստոնէութիւնը շատ շուտ մտած չերևար Հելուետիա, մասնաւորապէս արևելեան մասին մէջ: Հինգերորդ դարուն դէպ 'ի վերջերը Ռուրգիներանց մասը՝ անոնց թագաւորութեան կանգնուելու ատենը քրիստոնէութիւնն ընդունեցաւ. բայց արևելեան Հելուետիոյ մէջ բնակող Ալամանները դեռ երկար ատեն իրենց հովուութեան և որսորդութեան վիճակին մէջ մնացին՝ իրենց Տեւտոնեան նախնեացը թանձր կուսակաշուութիւնը հաստատ պահելով: Աթեներորդ դարուն սկիզբները՝ իուլանտացի Ս. Աղոմպանոս կրօնաւորը իր քանի մը աշակերտներովը Վաղղիայէն եկաւ՝ Աւետարանին քարոզութիւնը Հելուետիոյ Ալամաններուն մէջ տարածելու համար: Վանի որ հետոյ հետէ ասոնց քարոզութիւնները պտղաբեր կ'ըլլային, Ալամանք իրենց Աօտան աստուծոյն պատկերները կը խորտակէին և եկեղեցիներ ու մատուռներ կը շինէին: Այսպէս իրենց ծագումն ունեցան այն եկեղեցիներն ու աբբայարանները, որ ետքէն շատ անուանի եղան, այսինքն Ս. Ալլոս, Տիզէնդիս, Աէքինկէն, Ս. Իլարիոս, Ս. Լէոտեկարիոս Լուչեանայ և Յուրիկի Սեւարան ըստաճները: Այս առաքինի կրօնաւորները այն բիրտ ժողովրդեան սորվեցուցին նաև հերկելու, ցորեն սերմանելու, այգի տնկելու և ուրիշ օգտակար արուեստներ ալ:

Ուրիշ անգամ կը տեսնենք սոյն բովանդակութեանս մէջ Հելուետիոյ քաղաքական ու զինուորական պատմութիւնը, որ ինչուան հիմա պատմած ժամանակէս վերջը՝ իր փոխուած անունովը Արոպիոյ անկախ ազգաց մէջ նշանաւոր տեղի մը ունի:



ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Վագր:

Վագրը ահաւոր գազան մըն է, որ փղին ու ինչուան առիւծին հետ կը համարձակի պատերազմելու: Բնդհանրապէս առիւծէն աւելի պզտիկ է, և երկայնքը ճակտէն ինչուան ձեւոր առնելով՝ 6 ոտք է. երբեմն ինչուան 10 ոտնաչափ կ'ըլլայ: Սորթին գոյնը դեղնորակ է և պիսակի տեղ խոտորնակի սև գծեր ձգուած են կունակէն ինչուան փորուն տակը. ձետն ալ նոյնպէս դեղին ու սև օղակներով ձևացած է, որոնց վերջինը միշտ սև կ'ըլլայ: Այս գազանը բարեբաղդաբար սակաւագիւտ կենդանիներէն մէկն է. որովհետև սովորաբար միայն Արևելեան Նոգիաստան կը գրտնուի, թէպէտ և ճանապարհորդներէն ոմանք կը հաստատեն թէ նաև Վոչին չինու ու Սիամու երկրին մէջն ալ տեսած ըլլան:

Իսկ ուժը խելքէ մտքէ վեր է. շատ անգամ տեսնուած է՝ որ վագրը գրեթէ առանց դժուարութեան իրմէ շատ աւելի մեծ ու անհեթեթ կենդանիներ քաշած տարած է: Արբ իր սոսկալի ձայնը կը հնչեցընէ անտառներու մէջ՝ կենդանիք սարսափած կը փախչին, թռչունները ասդիս անդին կը թռչոտին, և ինչուան առիւծները իրենց բաշը կը սկսին տատանել: Այսպէս խոշոր ու սուր ահուաներով զինած է. թաթերն ալ ճիրաններով, որոնցմով մէկ անգամ որ զարնելու ըլլայ՝ կով մը կը պատուէ. և իր արիւնարբու աչուրները խարդախ ու միանգամայն սպառնալից նայուածք մը ունին. իր բոլոր կերպը մեր ընտանի կատուններուն ամենեւին նման է. որսը յափշտակելու համար զգուշութեամբ ու կամաց կամաց առաջ կու գայ և յանկարծակի վրան կը նետուի, և բարձր սեղերուն մէջ ու մա-

ցառուտ տեղուանք փորուն վրայ սողալով՝ յանկարծ ուժով մեծ մը կը ցատքէ և անցնող կենդանւոյն վրայ ճիշդ կ'իջնայ՝ գրեթէ առանց երբէք վրիպելու : Ըմէն տեղէ աւելի գետեզերքի մօտ տեղուանք կը պահուրտի՝ գետէն առտու իրիկուն ջուր խմելու եկող գացող կենդանիներէն որսալու համար :

Ընդհանրապէս վագրը շատ աւելի անգութ ու արիւնարբու սեպուած է քան զառիւծը . սակայն շատ կենդանաբաններ կը ժխտեն ասիկայ : Երկուքն ալ, կ'ըսեն, իրենց ուժին սաստկութեամբ աննուաճելի են, իրենց անօթութեան ատենը անողոքելի, և կատաղութեան ատեննին՝ յանդուգն . բայց գերութեան մէջ երկուքն ալ իրենց գազանութիւնը մասամբ կը կորսնցնեն . երբ լաւ մտադրութեամբ հոգացուի իրենց կերակուրը, ինչպէս առիւծը, այնպէս վագրն ալ իրենց պահապաններուն հետ կ'ընտանենան և բազմութեան մէջէն զանոնք ուրիշներէն կը զանազանեն : Ատանգամ տեսնուած է որ քաղցրութեամբ ու հաճութեամբ մը թոյլ կու տան որ պահապանը զիրենք շոյէ, և իրենք ալ քծնելով մը ու քսուելով իբրև թէ անոր պատասխան կու տան : Բայց ասով ըսելէ թէ վագրը սարսափելի գազան մը չըլլայ . իր արտաքոյ կարգի ուժն ու իր ախորժակին սաստկութիւնը՝ ատոր յայտնի ապացոյց են :

Վագրին որսը թէպէտ և շատ դժուարին է, սակայն Երևելեան Հնդկաստան շատ յաճախեալ է, որովհետև մորթը ազնիւ մուշտակ կ'ըլլայ . և հոն տեղի մեծամեծներուն ալ մի միայն զուարճութիւն սեպուած է :

Ճանապարհորդք հազարումէկ դիպուածներ կը պատմեն իրենց այս կենդանիէն ունեցած վտանգներուն վրայ . մենք ասոնցմէ մէկ հատը միայն դնենք հոս տեղս, որ շատ հետաքրքրական է և արդէն այդ հատուածին մէջ դրուած պատկերն ալ այս դիպուածիս մէկ մասը կը ներկայացնէ :

“ Ըջիս առջև եղած տեսարանը ,

կ'ըսէ ականատես Ճանապարհորդը , վախ կու տար ինձի՝ որ շատ օրեր այդ այրին մէջ պիտի ստիպուինք կենալու : Բայց երբոր մըրիկը քիչ մը իր սաստկութենէն ինջաւ, մեր առաջնորդները դուրս ելան տեսնելու թէ արդեօք կըրնանք ճամբանիս շարունակել : Մեր ապաւինած այրը այնպէս մութ էր, որ երբ մուտքէն քիչ մը հեռանալու ըլլայինք, բթաչափ մը անդին՝ բան չէր տեսնուեր : Եսպէս երբոր մեր կեցած տեղւոյն խեղճութեանը վրայ կը խօսէինք յանկարծ այրին մէջէն ողբաձայն հեծութիւններ լսուեցան . « 1 . Մ որ թըն և ես սարսափով մը այս չարագուշակ ձայները կը լսէինք, բայց Մինգըն մեր երիտասարդ բարեկամը ու իմ Ֆրանք ծառաս երեսի վրայ սողալով՝ դէպի այն խորերը գացին այս ձայներուն պատճառն իմանալու համար . հազիւ թէ քիչ մը առաջ գացին՝ զարմացման աղաղակ մըն է ձգեցին, և քիչ մը ետքը դարձան՝ թևերնուն տակը մէյմէկ կենդանի առած . այս կենդանիները մեծ կատուի կը նմանէին, սուր և ուժով ակռաներ ունէին, աչուրնին կանաչագոյն, և ոտուրներուն թաթերն ալ երկայն ճիրաններ ունէին, լեզունին արեան կարմրութիւն ունէր : « 1 . Մ որ թըն զասոնք տեսածին պէս մէկէն պուռաց . “ Տէր Եստուած, մենք մէկ . . . ” , դեռ չլմնցուցած մեր հնդիկ առաջնորդները արտօրանօք դէպի մեզի վազելով կանչեցին . “ Վագր մը, վագր մը ” , ու իրենք շուտ մը զարմանալի արագութեամբ այրին քովը եղած կիտրոնի ծառին վրայ ելան ու անոր տերևներուն մէջ պահուրտեցան : Բայց « 1 . Մ որ թըն ամենևին չչփոթեցաւ . այրին քովը բարեբաղդաբար մեծ քար մը կը գտնուէր, հրամայեց որ ամենքնիս մէկ տեղ ուժ տալով՝ այրին բերանը թաւալենք, որպէս զի գազանը ներս չկարենայ մտնել . անոր համար ամենայն ճիգն թափեցինք, մանաւանդ երբոր վտանգը երթալով կը մօտենար, որովհետև գազանին մունչիւնը որոշ կը լսէինք, ու թէ որ դեռ այրին մուտքը չգոցած հաս-

նելու ըլլար , բաներնիս բուսած էր :
 Ղեռ մեր գործողութիւնը ամբողջ չը-
 լմընցուցած՝ մէյ մ'ալ անդիէն գազա-
 նը ցատքըռտելով դէպ 'ի մեզի սկսաւ
 գալ . այս ահաւոր վայրկեանի մէջ մեր
 ուժը կրկնապատկեցինք , և այն մեծ
 քարը իրեն ու մեր մէջը ամուր պատ-
 նէշ մը եղաւ . միայն վերի կողմանէ
 պզտիկ միջոյ մը բաց մնացած էր , ուս-
 կից որ կրնայինք վազըր տեսնել . գա-
 զանը առջի բերան իր զօրաւոր ձիրան-
 ներովը ուղեց քարը տապալել , բայց
 չկրնալով՝ գլխովը ջանաց , սակայն զուր
 տեղը . տեսնելով իր ձգանցը պարապ
 ելլելը՝ չարաչար կատուեցաւ և այնպիսի
 ահաւոր ձայնով մը մունչեց , որ կեցած
 տեղերնիս կը սարսէր . նոյն միջոցին
 Պ . Ս որթըն հրամայեց որ կրակ թա-
 փենք գազանին վրայ . սակայն դժբաղ-
 դաբար տեղւոյն խոնաւութենէն վառ-
 դը աւրուած ըլլալով՝ կրակ չելաւ :
 Այս տեսնելով ամենքնիս ալ յուսա-
 հատութեան մէջ ինկանք , որովհետեւ
 ալ ապրանաց ուրիշ ձար չկար . կամ այ-
 ըին մէջ փակուած վագրին լակոտներուն
 հետ անօթութենէ պիտի մեռնէինք ,
 և կամ թէ թող պիտի տայինք որ գա-
 զանը ներս մտնելով՝ զմեզ զամենքնիս
 պատռէ : Արք այս կրից մէջ տագնա-
 պեալ էինք , մէյ մըն ալ իմ Ֆրանք
 ծառաս ինքիրմէ դուրս ելած գնաց գա-
 զանին լակոտները մէկիկ մէկիկ խրդ-
 դելով՝ քարին վրայի ծակէն առջևը նե-
 տեց : Սագրը զասոնք տեսածին պէս՝
 լուռ ու մունջ կերպով մը սկսաւ լու-
 մը գննել . երբոր ալ ապահով իմացաւ
 թէ մեռած են , այնպիսի յուսահատ
 ու ահռելի ազազակով մը պոռաց՝ որ
 հարկադրեցանք ականջնիս գոցելու :
 Վիչ մը ատեն անցաւ՝ հեռուէն եր-
 կարատե մունչիւն մըն է լսուեցաւ . վա-
 գրը ասոր՝ տխուր ու ողբաձայն հեծու-
 թեամբ մը պատասխանեց . ու քանի
 մը վայրկեանէն մէյ մ'ալ ինչ տեսնենք .
 ուրիշ մէկ վագր մըն ալ ցատքըռտելով
 դէպ 'ի այրը կու գար , որ մատակն էր .
 ձագերուն քովը հասածին պէս՝ մէկէն
 գննեց , և մահերնիս պտուգելով՝ այն-

պիտի սարսափելի ձայնով մը մունչեց ,
 որ առջինին ահաւորութիւնը մոռցը-
 նել տուաւ , և մէկէն սկսաւ այրին
 մուտքը դիտել , և զմեզ տեսնելով՝ այն-
 պիտի կատաղութեամբ յարձրկեցաւ ,
 որ վախցանք թէ քարը չտապալէ . և
 իրաւցընէ ալ անշուշտ կը տապալէր ,
 թէ որ ամենքնիս ալ ամէն ուժերնիս
 թափելով՝ քարը չբռնէինք , Արք տեսաւ
 որ ասանկով գուր չկրնար ելլել , գնաց
 իր ընկերոջը միւս վագրին քովը , ու
 կարծես թէ խորհրդակցութիւն մը ը-
 ըին քանի մը վայրկեան և մէկէն արա-
 գութեամբ աներեւոյթ եղան :

Հեռանալուն պէս մեր երկու հըն-
 դիկ առաջնորդները եկան այրին բե-
 րանը ու արտորանօք փութացուցին
 զմեզ անկէց ելլելու ու փախչելու , ըսե-
 լով թէ երկու վագրերը լերան բարձրե-
 ըր գացին՝ որ ուրիշ ձամբով այրը մըտ-
 նեն . անոր համար ամենքնիս մէկտեղ
 մէկէն քարը թաւալելով՝ անկէց դուրս
 ելանք ու սկսանք շուտ շուտ փախչիլ :
 Վառորդ մը այսպէս երթալէն վերջը ,
 մէյ մ'ալ հնդիկ առաջնորդներէն մէկը
 սուր ձայնով մը պոռաց՝ իմացընելով թէ
 վագրերը մեր ետեւէն ինկած են . նոյն
 միջոցին մենք մէկ ժայռուտ հեղեղատ
 մը հասանք , ուսկից որ սրընթաց յոր-
 ձանքներով ջրոյ հեղեղ մը կը վազէր .
 և վրան մէկ եղեգէ կամուրջ մը միայն
 կար , ուսկից միայն կարելի էր դիմացը
 անցնիլ , որովհետեւ ջրին յատակը շատ
 խորունկ էր , ու ընթացքն ալ , ինչպէս
 ըսինք , ամենասուր . անոր համար մե-
 ծաւ զգուշութեամբ ես , Ս ինգըն ու
 Ֆրանք ծառաս և երկու հնդիկները
 մեծաւ յաջողութեամբ այն նեղ ու վը-
 տանգաւոր կամիջէն անցանք . բայց
 դեռ Պ . Ս որթըն կամրջին կէսը հա-
 գիւ հասած էր , ետեւի կողմէն մնցաւ
 ներուն մէջէն յանկարծ երկու վագրերն
 ալ դուրս ցատքեցին և դէպ 'ի մեզի
 սկսան դիմել : Այն վտանգաւոր վայր-
 կեանին Պ . Ս որթըն ամենեւին առանց
 չփութելու իր բնիկ քաջասրտութեամբը
 շուտ մը կամուրջը անցնելով՝ քաշեց
 մէջքէն որսի մեծ գանակը , ու եղեգ-



Վ ա գ ր :

ներուն կապը կտրելով՝ այն նեղ կամուրջը , որ կրնար մեզի նոյն միջոցին մահառիթ ըլլալ , ջուրը ձգեց : Եւ այն ջրեղէն անդունդը զմեզ գազաններէն բաժնեց , սակայն անոնց կատաղութիւնը չզսպուեցաւ . որովհետեւ ջրին եզերքը հասնելուն պէս՝ մատակ վագրը զիմեց դէպ 'ի ջուրը և մէկ ցատքելով մը կ'ուզէր մեր կեցած կողմը անցնիլ . զարմանալի ու միանգամայն ահաւոր տեսարան մըն էր այս կատաղի գազանը վայրկեան մը այն անդունդին վրայ օդուն մէջ կախուած տեսնելը . բայց փայլակի մը պէս անցաւ այս երևոյթս . իրեն ուժը տեղւոյն հեռաւորութեանը հետ համեմատական չէր , ու դեռ անդունդին յատակը չհասած , մէջի եղած սրածայր ժայռերուն զարնուելով՝ հա-

զարումէկ կտոր եղաւ : Եւս դժբաղդ արկածը ամենեւին վհատութիւն չըտուաւ իրեն ընկերին . աւելի բուռն թափով մը ցատքեց ու անդունդէն անդին անցաւ , բայց ափունքը հազիւ թէ իր առջևի ճիրաններովը կրցաւ բռնել . ասանկով անդունդէն վեր կախուած մնաց ու կը ջանար ոտուրները տեղ մը հաստատել . բայց Պ . Ս որթըն , որ անմիջապէս գազանին քովն էր , արիութեամբ որսի դանակովը վրան դիմեց ու կուրծքին սաստիկ հարուած մը տուաւ . ասկէց չարաչար կատաղելով վագրը՝ բոլոր ուժը իրեն ժողվեց , ու ետևի ոտուրները ժայռի մը վրայ հաստատելով՝ առջևի ճիրաններովը զՊ . Ս որթընը ազգրէն բռնեց . սակայն իմ արի բարեկամս ամենեւին անխուով ու-

գւով ձախ ձեռքովը ծառի կոճղ մը բռնեց իրեն նեցուկ և աջովը նորէն կըրկնեց հարուածը՝ գազանին կուրծքը խռթելով իր մեծ դանակը . այս ամէնը վայրկենական գործողութիւն մը եղաւ :
 Նոյն միջոցին հնդիկները , ինգըն , Ֆրանք և ես՝ իրեն օգնութեան վազեցինք . ինգըն ⁽¹⁾ . Սորթընին հրացանը , որ գետինն էր , առաւ ու այնպիսի ուժով մը զարկաւ վագրին գլուխը , որ կենդանին ընդարմացած՝ ձգեց բռնած տեղը ու հեղեղատին մէջը գլտորեցաւ . բայց ամսոս որ այդ դժբաղդ երիտասարդը իրեն հարուածին ուժը չէր կշռած . դէպ ՚ի առջևը ծռեցաւ , ոտուրները սահեցան և ձեռուրները նեցուկ մը չգտնելով՝ անդունդին մէջ գլորեցաւ , և քիչ մը ատեն ջրին երեսը տապալարկելով՝ ետևէն մէջը ընկղմեցաւ ու աներևոյթ եղաւ , :

ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Մագառտեսակ երևոյթներ :

Եւս տեսակ երևոյթներն ալ հաստատուն մարմիններու հեղանիւթներուն հետ ունեցած զուգակցութեան ձգողութենէն առաջ կու գան . միանգամայն և հեղանիւթներու յատուկ եղած համակցութենէն : Կան հեղանիւթներ որ կարողութիւն մը ունին իրենց երեսէն վեր բարձրանալու կամ իրենց երեսէն վար իջնալու վտառաւոր գոյացութեանց վրայ , կամ ամենանուրբ տրամագծով խողովակներու մէջ , որ այս պատճառաւ ճապարհասկ խողովակ կ'ըսուին : () ինակի համար՝ թէ որ գունաւոր ջրոյ մէջ ամենանուրբ տրամագծով ապակիէ խողովակ մը խռթելու ըլլաս , կը տեսնես որ ներսի ջուրը արտաքին մակերևութէն աւելի կը բարձրանայ , և այնչափ աւելի վեր կ'ելլէ , որչափ որ խողովակին տրամագիծը պղզտիկ ըլլայ : Նոյն երևոյթը կը տեսնուի նաև այն ուրիշ հեղանիւթներուն վրայ , որ կրնան ապակին թրջել :

(1) Իր երկու ապակի թիթեղներ անանկ բռնես՝ որ իրենց մէկ կողմի ուղղահայեաց եզերքը իրարու դպչին , ու հակառակ կողմինները քիչ մը իրարմէ հեռու մնան , գունաւոր հեղանիւթը երկու թիթեղներուն մէջտեղի միջոցը կը բարձրանայ՝ այնչափ աւելի , որչափ որ թիթեղները եւելօք իրարու մօտ ըլլան : Եւս կերպով գունաւոր հեղանիւթին մակերևոյթը մասնաւոր կողմութիւն մը կ'առնէ , որ չափաւանդան կ'ըսուի :

Եւսն ծակոտկէն գոյացութիւններ , ինչպէս սպունգը , հացը , շաքարը , կտաւը , և այլն , կրնանք մտածել մազատեսակ խողովակներու հաւաքում մը : Թէ որ սպունգի կամ շաքարի կտորի մը մէկ ծայրը մէկը ջրոյ մէջ թաթխէ , ամէն մարդ գիտէ որ հեղանիւթը երկուքին մէջն ալ կը բարձրանայ , և ջրոյն երեսէն շատ վեր զանոնք կը թրջէ : Նոյնպէս կանթեղի մը պատրոյգը՝ վառելու պէտք եղած ձէթը կը ծծէ երկու կամ երեք մատնաչափ խորունկութենէ ալ : — Հաւանական է որ տնկոց հոյզին վեր ելլելուն ալ պատճառը այս երևոյթն է :

(2) Իր նուրբ տրամագծով ապակի խողովակ մը այնպիսի հեղանիւթի մէջ խռթուի , որ չկրնար ապակին թրջել , ինչպէս է սնդիկը , ըսածնուս ամենևին ներհակ երևոյթը կը հանդիպի : Մոզիկը խողովակին մէջ բարձրանալուն տեղը՝ ընդ հակառակն իրեն արտաքին մակերևութէն վար կը մնայ , և այնչափ աւելի ցած կ'ըլլայ , որչափ որ խողովակին տրամագիծը պղտիկ ըլլայ :

Եւելօրդ կը սեպենք այն խնդիրներուն մէջը մտնել՝ ինչ որ չափաբանք կ'ըսեն մազատեսակ խողովակներու երևոյթը բացատրելու համար . բաւական է գիտնալ՝ որ աւելի դիտելու հանգամանքն է հեղանիւթին մակերևութին ձևը , որ ինչպէս որ ըսինք՝ երբեմն խողովակին մէջը դրսի մակերևութէն բարձր կ'ըլլայ , երբեմն ալ ընդ հակա-

1 Գլ. Hyperbole.